ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ
Ավստրիայի Հանրապետություն (Վիեննա)
գործուղման արդյունքների մասին

1. **Անունը, ազգանունը.**
   Տաթևիկ Ստեփանյան

2. **Զբաղեցրած պաշտոնը.**
   ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարի տեղակալ

3. **Գործուղման վայրը և ժամկետները.**
   Վիեննա, Ավստրիայի Հանրապետություն, մայիսի 22-26-ը, 2022 թ.

4. **Հրավիրող կողմը.**
   «ՍՕՍ Մանկական Գյուղեր» հայկական բարեգործական հիմնադրամ

5. **Գործուղման նպատակը**.
   «ՍՕՍ Մանկական Գյուղեր» հայկական բարեգործական հիմնադրամի կողմից իրականացվող «Համակարգային խնդիրների վերհանում, աջակցություն երեխաների պաշտպանության ոլորտի բարեփոխումներին Հայաստանում, Ալբանիայում, Բելառուսում, Հյուսիսային Մակեդոնիայում և Ուկրաինայում» տարածաշրջանային ծրագրի շրջանակներում փորձի փոխանակման այց:

6. **Քննարկված թեմաները.**
   Հանդիպումների ընթացքում քննարկվել են կյանքի դժվարին իրավիճակում հայտնված երեխաներին տրամադրվող ծառայությունները, երեխաների իրավունքների պաշտպանության գործընթացում պետության, ոլորտային ոչ պետական կառույցների, ինչպես նաև համայնքների փոխգործակցությունը:
   Քննարկվել են նաև երեխաների իրավունքների պաշտպանների գործունեության արդյունավետության մանրամասները՝ ուղղված երեխայի լավագույն շահի ապահովմանը: Հանդիպումների ընթացքում ներկայացվել են նաև անկախ ապրելակերպի անցմանն ուղղված զբաղվածության ծրագրերը, ինչպես նաև օրենսդիր մարմնի կողմից ի նպաստ երեխաների իրավունքների պաշտպանության իրականացվող աշխատանքները:

7. **Հանդիպումները, ելույթները, բարձրացված կամ քննարկված հարցերը.**
   «ՍՕՍ Մանկական Գյուղեր» բարեգործական կազմակերպության տեղական և միջազգային գրասենյակում ներկայացվել են կազմակերպության կողմից իրականացվող ծրագրերը, քննարկվել են երեխաներին փոքր խմբային տներում տրամադրվող ծառայությունների մանրամասները: Այցելություն է կազմակերպվել

երեխաների փոքր խմբային տուն, ներկայացվել է նաև երեխաների իրավունքների պաշտպանության ոլորտում վերջին տարիներին իրականացված աշխատանքների հետազոտական վերլուծություն: Հանդիպման ընթացքում կողմերը քննարկել են երկու երկրներում այլընտրանքային խնամքի տրամադրման առանձնահատկությունները:
Հանդիպման ընթացքում ներկայացրել եմ հարցադրումներ տեղեկատվական համակարգի առկայության, երեխաների իրավունքների պաշտպանության ոլորտի ֆինանսավորման մեխանիզմների և ոլորտային այլ հարցերի առնչությամբ:
Հաջորդ հանդիպումը կազմակերպվել է Ընտանեկան հետազոտությունների ավստրիական ինստիտուտում, որտեղ ներկայացվել է Ավստրիայում, մասնավորապես Վիեննայում ընտանիքին տրամադրվող սոցիալական աջակցության եղանակների մասին տեղեկատվություն:
Երիտասարդների զբաղվածության գործակալությունում տեղի ունեցած հանդիպման ընթացքում գործակալության ներկայացուցիչները ներկաներին փոխանցել են տեղեկատվություն գործող ծրագրերի, դրանցում երիտասարդների ընդգրկման ընթացակարգերի վերաբերյալ, ապա ներկայացրել են գործակալության երկու բաժինները և տեղում ծանոթացրել երիտասարդներին տրամադրվող ծառայություններին: Ներկաները հետաքրքրվել են երիտասարդների դիմելու, գրանցման ընթացակարգերով:

Ավստրիայի խորհրդարանի ընտանիքի և երիտասարդների հարցերով խոսնակ Նորբերտ Զիբերի հետ քննարկման ընթացքում վերջինիս կողմից ներկայացվել են երեխաների, ընտանիքների հիմնահարցերին առնչվող պետական քաղաքականության մանրամասները: Հանդես եմ եկել ելույթով՝ ներկայացնելով ներկայում երեխաների հիմնահարցերի ոլորտում տեղի ունեցող բարեփոխումները:

Երիտասարդների և երեխաների իրավունքների պաշտպան Դունյա Ղարվալի հետ հանդիպման ընթացքում ներկայացվել են իրավապաշտպանների կողմից իրականացվող ուսումնասիրությունների ընթացակարգերը:
Հանդիպում է կայացել նաև Ավստրիայի արտաքին գործերի նախարարության ներկայացուցիչների հետ: Հանդիպմանը ներկա է գտնվել նաև Հայաստանում Ավստրիայի դեսպան Ալոիս Կրաուտը, որի ընթացքում ներկայացվել են երկրի քաղաքականությունը, ԱՍՀ նախարարության և «ՍՕՍ Մանկական Գյուղեր» կազմակերպության հետ համագործակցության մանրամասները: Ավստրիացի գործընկերները ներկայացրել են նաև ՀՀ մարզերում Ավստրիական զարգացման գործակալության կողմից իրականացվող ծրագրերը:
Հանդիպում եմ ունեցել նաև Ավստրիայում ՀՀ դեսպան Արմեն Պապիկյանի և կցորդ Տիգրան Զաքարյանի հետ, հանդիպմանը մասնակցել է նաև Վիեննայում մարդու իրավունքերի պաշտպան Նարեկ Պետրոսյանը, ով համակարգում է երեխաների, երիտասարդների, հաշմանդամություն ունեցող անձանց հիմնահարցերի ոլորտները: Քննարկվել են հնարավոր համագործակցության ուղիները, ներկայացվել է երկուստեք հետաքրքրող ոլորտային տեղեկատվություն:

8. **Հանդիպման կամ հավաքի ժամանակ ընդունված որոշումները, պայմանավորվածությունները, ստորագրված փաստաթղթերը.**
Հանդիպումների ընթացքում փաստաթղթեր չեն ստորագրվել, ձեռք են բերվել պայմանավորվածություններ, մասնավորապես՝ Վիեննայի մարդու իրավունքների պաշտպան Նարեկ Պետրոսյանի հետ պայմանավորվածություն է ձեռք բերվել երեխաների պաշտպանության համակարգի, ինչպես նաև՝ տարեցների, հաշմանդամություն ունեցող անձանց, անօթևանների համար իրականացվող սոցիալական ծրագրերի մեխանիզմների իրականացման իրավական հիմքերի ուսումնասիրության և դրանց հնարավոր տեղայնացման համար: Պայմանավորվածություն ձեռք բերվեց նաև երեխաների՝ ընտանեկանին մոտ այլընտրանքային խնամքի կազմակերպման բոլոր ձևերի ուսումնասիրության և լավագույն փորձը Հայաստանի Հանրապետությունում կիրառելու վերաբերյալ:
Հատուկ շեշտադրում կատարվեց մանկատների ապաինստիտուցիոնալացման գործընթացի կազմակերպման մանրամասներին և Հայաստանի Հանրապետությունում փոխակերպման գործընթացի կազմակերպմանը:
Պայմանավորվածություն է ձեռք բերվել նաև Վիեննայի շրջանի խորհրդական Լենա Հովիվյանի հետ՝ համայնքային և երեխաների իրավունքների պաշտպանության լիազոր մարմնի հետ փոխգործակցության նպատակով:

9. **Առաջարկությունները, դրանց ընթացք տալու վերաբերյալ առաջարկները՝ եղանակը, ձևը, ժամկետները, պատասխանատուները, ակնկալվող արդյունքները.**
Աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարությունը հետամուտ կլինի ձեռք բերված պայմանավորվածությունների շրջանակներում գործընկերների կողմից ներկայացված մոտեցումների ուսումնասիրմանը և կյանքի կկոչի ձեռք բերված պայմանավորվածությունները:

10. **Ստորագրությունը, ամսաթիվը:**

Recoverable Signature

X

ՏԱԹԵՎԻԿ ՍՏԵՓԱՆՅԱՆ

30.05.2022 Signed by: STEPANYAN TATEVIK 6205820293